



ՀԱՆՔԵԱ ՏԱՊՆՕՐԵԱՅ

Գ. ՏԱՐԻ Ե. ՉՐԶԱՆ

1863

Թ. Ի. 63. ՆՈՅՆՄԵՐ 1

“ՄԱՍՏՈՒԸ ԸՆԿԵՐՈՅԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԼՈՅՍ Ե, ԵՒ ՈՒՐ ՈՐ ԼՈՅՍ ԿԵՑ, ՀՈՆ ԿԵՑ ՆԱԵՒ
ՆԱԽԱՆՆԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ: Վ. ՀԻՒԿՕ

ԲՈՎԱՆՔԱՆՈՒԹԵԱՆ

- Երկր-հարցում.
- Աշխարհ.
- Խղճի ազդեցություն.
- Լե Միլիտարյու.
- Սեր.
- Ծանուցում.

ԵՐԿՈՒ ԶԱՐՑՈՒՄ

Մեր բերանը եօթն ամիսի չափ կարուած մը նալին ետք՝ այսօր գարձեալ արտօնութիւն կունենայ խօսելու, իւր սկզբնական նշանաբանը պահելով:

Ամն մարդ գիտէ թէ գատապարտուեցանք ՚ի լուծիւն, այլ հետաքրքիր ազգայինը կը հարցունէ.

Ա. ինչպէս.

Բ. ինչո՞ւ.

Ազատութիւն չունինք պատասխանելու առջին հարցման: Լուենք ուրեմն և երկրորդ հարցման պատասխանելէ ետքը վարագոյր մը ձգենք անցեալին վրայ:

Ծառիկ եօթնամսեայ գաղարու մը իրեն համար պատիժ մ'էր: Ամն պատժապարտ պատժուելէ յառաջ յանցանք մը գործած կըլլայ: Այս կտիպէ զմեզ հարցունել իւրովի. — Մենք յանցանք մը ունեցանք, և եթէ ունեցանք, ինչ էր այն:

Այո, Ծառիկը յանցանք մ'ունեցաւ և պատժուեցաւ. այլ հասարակութիւնը տակաւին չգիտէր

թէ ինչ է այս յանցանքը, ըստ որում օրագիրք բուն եղելութիւնը պահեցին անորմ: Երբեք և Երբեք համարձակեցան զրելու թէ Ծառիկ գաղարուան պատճառ առանց հրամանագրի հրատարակութիւն էր:

Այլ սակայն մեր յանցանքը ոչ այլ ինչ էր, բայց եթէ վիճակիս Գեր. Առաջնորդին դէմ յօդուած մը հրատարակելնիս. . . . Կը խոստովանինք թէ այս էր մեր յանցանքը և ՚ի հաստատութիւնը սածնուս վիայ կը բռնեմք Իզմիրի վսեմափայլ կառավարչին Բ. Գրան զրկած նամակը և Բ. Գրան կողմէն ալ Ծառիկ վերտին հրատարակման համար մտերս առ Կորին վսեմութիւնն եկած Կարգուսական հրամանագիրը:

Թող հասարակութիւնը հասկնայ թէ երբեմն ինչ արժէք կրնան ունենալ յիշեալ երկու թերթերուն լուր մատակարարող աղբիւրները: Օտարական թերթը ոչ այնչափ մեր զարմանքը կը զրուէ, որչափ ազգայինը, որուն քաջածանօթ էր Ծառիկը հասարակաց կրթութեան ժողովին արտօնաբերող հրատարակիչը: Երբեք ճշմարտասիրութեան դաս տալու միտք չունինք, վասն զի այն որ արգարութեան ձայնը չլսեր, չպիտի կրնայ լսել երբեք նաև մարդկային որ և է ձայն մը:

Երկրորդ անգամ երբ դաբրեցաւ մեր հանդէսը, ինքնին որոշեցինք բոլորովին հեռանալ օրագրութեան ասպարէզէն, ոչ թէ վասն զի ալ յուսահատած էինք, այլ վասն զի քաջ համոզուած էինք թէ տակաւին շատ հեռի է Հայերէն այն ժամանակը, ուր անոնք պիտի կարենան համբերել ճշմարտութեան անաչառութեանը:

Բարեկամաց և ազգասէր անձանց համարու-
 թեան գրգուռը փոխեց սակայն մեր այս որոշումը,
 և հետևաբար սահպուելցանք Պօլիս երթալ և լու-
 սաւոր միաքերու միջամտութեամբը Ազգային վար-
 չութեան յանձնել մեր դատը: Արիշ կերպիւ վա-
 րուիլ և յաջողիլ դժուարին էր, չքսենք անհնարին:
 Ազգային վարչութիւնը բարեհաճեցաւ պաշտօնան
 կանդնիլ մեզ և պաշտօնական կերպիւ Բ. Գունէն
 խնդրել մեր թերթին հրամանագիրը: Կայսերական
 կառավարուիլը, որ նախանձախնդիր է իր հպատակաց
 բարորութեանը, ընդունեցաւ Ազգին յայտագիրը՝
 Ծառիկն հրատարակման արածուութիւնը շնորհելով, և
 քանի մը շաբաթ առաջ բարձրագոյն Ետրոպոսին
 կողմէն եկած հրամանագիրը, զոր Գեր. Տեղապահ
 Սրբազանը Ազգային վարչութեան կողմէ յատուկ
 նամակաւ մը վիճակիս Գեր. Առաջնորդին ղրկած
 էր, տեղական իշխանութեան յանձնուելով, այսօր
 դարձեալ կերեայ հասարակութեան ընդ հովանաւ
 րութեամբ Ազգային վարչութեան:

Այն որ մեր վրայ տարաք կը դնէ երախտա-
 պարտ ըլլալ Ազգային վարչութեան, այն է որ ա-
 նիկա հաճեցաւ պաշտօնան կակդնիլ այնպիսի թեր-
 րթ մը, սրն որ իւր անկողմնապահ ազատասիրութիւնը
 նոյն իսկ անոր դէմ ալ յորոշած հրատարակելու յանցանք
 արդէն գործած էր: Չարմահալի հանդիպողականեր:
 Ազգային վարչութիւնը այս պարագայի մէջ յայտ-
 նեց մեզ թէ ինք տէր է նաև այն սկզբունքին որ
 ազգերու լուսաւորութեան աշտանակն է, ըսել կու-
 ղեմ մամուլի ազատութեան սկզբունքին:

Ար յանձնենք այս արժանայիշատակ դեպքը
 Հայ մամուլի տարեգրութեանց էջերուն. ասոնց կը
 յանձնենք նաև մեր այն երեք բարեկամաց անուն-
 ները որոնք յատկապէս աշխատեցան Ծառիկն հրա-
 մանագիրը առնելու: Մեր շնորհագարտութեան
 զղացումները յուզող այս երեք Մեծապատիւ ան-
 ձերն են Բարունակ Ալէյ՝ անդամ Բաղարական Ժո-
 ղովոյ, Գրիգոր Էֆէնտի Օսեան՝ Բտեհագոյի
 Իրեսփոխանական Ժողովոյ, և Յարութիւն Էֆէն-
 տի Մարտիեան՝ Օգնական Հասարակաց կրթութեան
 պաշտօնէի: Քննութեամբ յայտնելու մեր շնորհակա-
 լութիւնը նաև այն ամէն անձանց, որք մեզի հա-
 մակութիւն ցուցուցին թէ՛ Պօլիս գտնուած ա-
 տենիս և թէ՛ հոս, արժան կը համարինք հրատա-
 րակել՝ անփոփոխ տատագրելով՝ Մեծապատիւ Բա-
 րունակ Ալէյին մէկ նամակը, զորն որ իբր Բտե-
 հագետ Պատն Ժողովոյ գրած էր մեզ Ծառիկն հը-
 րամանագիրը առնուելէն քանի մ'օր առաջ և ուր

կը նշմարուի աղտամիտ Ալէյին ազգասիրական ու-
 զին և սիրտը:

... . Պարոն Գր. Չիլիկիերեան

Ձեր առ իս ուղղած գրութիւնը ստացայ յօ-
 ժարակամ, որով շնորհակալութիւննիդ կը յայտնէք
 Ծառիկն հանդիսին հրատարակման համար ՚ի պաշ-
 տօնէ իմ կողմանէ եղած ջանից: Քանի որ Ազգա-
 յին Վարչութեան Բտեհագետը գտնուել եմ, ինձ
 պարտ համարած եմ Ազգին յատաճաղելութեան
 օգնող ձեռնարկութեանց իմ ազգեցութեամբս նը-
 պաստել: Եւ որովհետև Ծառիկն նախորդ անունը և
 ապագային մէջ աւելի օգտակար ըլլալու տրամա-
 գրութիւնը ուսումնական անձանց համարումը գրա-
 ւեր էին, իմ ալ ուշագրութեան արժանի գա-
 ուեցաւ: Աւստի անոր հրատարակման համար Բ.
 Գունէն պէտք եղած հրամանագիրը խնդրելը, ըստ
 իս Ազգային պարտաւորութիւն մը կատարած ըլլա-
 լով՝ չեմ կարծեր որ տարօրինակ արժանաւորու-
 թեան դործ մ'ըրած ըլլամ, այլ միայն իխտ ը-
 նական միջամտութիւն մը:

Աւստի ուրախ սրախ կը յայտնեմ որ Բ.
 Գունէն ալ, որ իւր ժողովրդեան յատաճաղելու-
 թեանը նպաստաւոր է, մեր խնդիրը ընդունեց և
 քանի մ'օրէն Ծառիկն հրատարակման հրամանագիրը
 ձեր ձեռքը կը հասնի:

Այս առթիւ աւելորդ չեմ համարիր յիշատա-
 կել որ Ծառիկն... Խմբագիրդ ալ բարեկամաց և
 մասնաւորապէս իմ վստահութեանս կը պատասխանէ՝
 իւր հանդիսին միջոցաւ ազգօգուտ և ընտիր յօ-
 գուածներ հրատարակելով և մամուլի ազատութիւ-
 նը Տէրութեան կանոնաց համեմատ և ամենայն խո-
 հակահոլութեամբ դործածելով:

Ազգային Վարչութիւնը այս ազատութիւնը
 որչափ որ կը յարգէ, նոյնքան կը դատաւարտե-
 անոնք որ զայն չարաչար կը դործածեն և հասարա-
 կութեան մէջ գրգուռութեան և դժտութեան առիթ
 կը ըլլան: Այս սկզբան համեմատ դիւրին է դատել
 Ազգային Վարչութեան ընթացքը երբ մէկ կողմէ
 ազգօգուտ հանդիսի մը հրատարակման տէրութիւն
 կընէ, և միւս կողմէ կը խափանէ և խափանելու
 պատրաստ է այն հրատարակութիւնը որ ազատախօ-
 սութեան ազնիւ և բարձր սկզբունքը անձնական
 կրից կը ծառայայնէ, և Ազգին օգուտը առ ոչինչ
 կը գրէ:

Իբրև Բտեհագետ Պատն Ժողովոյ այս մա-
 սին իմ պարտաւորութիւնս կատարելէն ետև իբր
 Ազգային մէկ անհատը կը խնդրեմ որ Ձեր քիչ

օրէն հրատարակելիք Հանդէսին զիս բաժանորդ
զրէք :

Մնամ
21 Օգոս. 1863
Կ. Պօլիս.

Անշնորհք
ԲԱՐՈՒՆԱԿ

ԱՉԳԱՅԻՆ

Արսուի թէ քաղաքիս Հայերը մէջ քորձէր ընե-
լու կարող՝ և հետեաբար պարտաւոր են :

Մէջ քորձէր ընելու կարող : — Ար նշանակե-
այս թէ մենք ոչ այնչափ ճնշուած ըլլալով իշխա-
նական ազդեցութեան ներքե՛ք՝ դիւրութիւն և յար-
մարութիւն ունինք ազգայնոց բարեխաւութեանը Բա-
նագիր ըլլալու :

Արնգունիք այս ենթագրութիւնը՝ քիչ մը մը-
տածելու թէութեամբ :

Ամէն դաւառ , այսինքն առաջնորդանիստ քա-
ղաք ունի իւր թեմերը : — Հանրաբար խօսելով
կրնանք կարծել թէ աւելի կամ պակաս կենդանու-
թեան նշան և լոյս ունեցող դաւառն է՝ և թէ թե-
մերը այս կենդանութեամբ կապին և այս լոյսով
կրնան փայլիլ :

Գաւառն է գլուխ մը , և թեմերն են գլխէն
վար կազմող ամբողջ մարմինը : — Եթէ կենդանի
է գլուխը , կենդանի է նաև մարմինը . եթէ հի-
ւանդ է այն , հիւանդ է նաև մարմինը . ուսկի կը
հեղալի թէ ամէն դաւառ , այսինքն ամէն գլուխ
պարտաւոր է առողջ կազմութիւն և պատկառելի
ուղեղ մ'ունենալու : Իւրաքանչիւր առաջնորդանիստ
քաղաքի տն թեմաբնակ ազգայինս իւր ունեցած այս
պարտաւորութիւնը նշանակելէ և յայտ մասին զայն
պատասխանատու ճանչնալէ ետև՝ կը դառնանք մեր
բուն նպատակին և կը սինք :

Ուրեմն Օմիւռնիա ալ առողջ կաղմ և միտք
ունենալու է՝ իւր թեմերուն Հայոց կեանք և լոյս
բաշխելու համար :

Այս նպատակին կը հասնինք եթէ լուծենք
սա երկու խնդիրները , որք քաջայայտ են ամենուն
և որոնց վրայ տակաւին իրապէս մտածող մը չունե-
նալին անուրանալի է :

Մարդկութեան ճակատագիրը այս խնդիրնե-
րու լուծման մէջ կամփոփուի :

Առաջին .

Արթութեան տարածում :

Երկրորդ .

Դիւրակեցութեան հանրացուցումն :

Արթութեան տարածումը կենթագրէ կրթարան-
ներու հաստատութիւն , բազմութիւն և արդիւ-
նաւորութիւն :

Դիւրակեցութեան հանրացուցումը կենթագրէ
երկրագործութեան , վաճառականութեան և ճար-
տարագիտութեան ողիին զարգացումը :

Արթարանը մարդու սիրտը և միտքը կը կազ-
մէ , և կու տայ անոր այն անհատական արժանաւո-
րութիւնը որ է ճշմարիտ բարոյականութիւնը և
դատաւարակութիւնը : Արկրագործութեան , վաճա-
ռականութեան և ճարտարագիտութեան ողիին ար-
թննալով մարդս կապրի դիւրութեամբ և անկա-
խութեամբ : Ուրեմն մարդկային երջանկութեան
էական տարրերն են բարոյականութիւն , կրթութիւն
և դիւրակեցութիւն :

Ո՛վ իւր վրան առնելու է այս տարրերը մեր
թեմաբնակ ազգայնոց հայկայթելու բարձր պաշտօնը՝

- Իզմիրի Հայերը .
- Իզմիրի Հայերը ըսելով ինչ կիմանանք .
- Անշուշտ մտաբոս կազմուելիք դաւառական
վարչութիւնը :

Հարի չէ հարցնել թէ մինչև հիմա Իզմիրի
ժողովուրդը իր այս բարձր պաշտօնը արդեօք ճանչ-
ցաւ թէ ոչ՝ և թէ ինչ ընթացք ունեցաւ :

Սա միայն դիտենք թէ այսպիսի պաշտօն մը
քանի որ կայ , զայն արժանաբար վարելու վարչու-
թեան մ'ալ հարկաւորութիւն կայ այսուհետև :

Այս պաշտօնը կատարելու կարող են միայն
ազգասիրութիւնը , անշահախնդրութիւնը և խելքը :

Եթէ ճշմարտութիւն մ'է այս , և եթէ ամէն
անկողնապաշտ միտքերու ընդունելի , ուրեմն ամէն
մէկ Հայ կը պարտաւորի , — եթէ կը ճանչնայ
պարթէ+ և էբս+ ըսուած բաները — , փութալ
քուէարկութեան իրաւունքը վայելելու , և իւր խղ-
ճին հետ նախ խորհրդակցելէ ետք քուէ թուղթին
վրայ նշանակել այնպիսի անուններ , որոնց խղճին
և մտքին յանձնուելու է հացի և լուսոյ կարօտ ազ-
գայիններու ակադան : Ով որ անտարբեր կը կենայ
այս պարագայի մէջ , բարոյական պատասխանատու-
ութեան տակ կիշնայ . ով որ քուէարկութեան խըն-
դիրը տղայական խաղալիկի մը տեղ կը դնէ , անձ-
նական կոից կը ծառայէ , ով որ քուէ կուտայ այնպի-
սիներու որոնց վրայ չեն նշմարուիր ոչ ընտրելու-
թեան իրաւունք և ոչ ալ յիշեալ երեք յատկու-
թիւնները , կամովին թէ իւր և թէ թեմաբնակ
Հայոց յետագիւնութեան վճիռ տուած կըլլայ :

Սահմանադրութեան գործադրութեան օգնական

ժողովը աշխատելու վրայ է եռանդալի ազդասիրութեամբ, և բարեյոյս ենք թէ անխիա ազգահամարը լիննալէն անմիջապէս ետք պիտի սկսի ընարութեանց և ժողովոց ու խորհրդոց կազմութեան պարապիլ: Օղնական ժողովի ազդասիրութեան առաջին ապացոյցը պիտի ըլլայ հասնիլ իւր նպատակին առանց որ և է անմիաբանութեան տեղի տալու: Որչափ որ դժուարին պաշտօն մ'է այս, այնչափ ալ մեծ է անկէ ծագելիք աղէկութիւնը: Առանց միութեան չէք փրկութիւն:

Ար լսենք թէ հիւպատոսարաններու թարգման և հտատակ ազգայինք ոմանք կը փափաքին եղեր գէթ Քաղաքական ժողովի և խորհրդոց անդամ ըլլալու: Թէև չենք պիտեր թէ Օղնական ժողովը ինչ ընթացք պիտի բռնէ, այսպիսի օրինաւոր փափաք մը տաժողներու նկատմամբ, սակայն մեր գիտցածը այն է թէ ըստ սահմանադրութեան որ և է ազգային պաշտօն վարելու իրաւունք չունին անոնք որք օտար իշխանութենէ մը պաշտպանեալ են: Այս խընդիւրը նաև Պօլիս յուզուեցաւ, բայց 'ի նպատակ Սահմանադրութեան լուծուեցաւ:

Արգարե կը խոստովանինք թէ մեր Սահմանադրութեան յօդուածներուն ամենէն դժուարամարը այն է, որ կը զրկէ օտար աէրութեանց հպատակ հայերը ընարելիութեան իրաւունքէն. բայց եղածը եղած է և կամայ ակամայ կը պարտաւորինք համակերպելու նոյն յօդուածին արամադրութեանը:



ԽՊՃԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ա.

La liberté de conscience est un des caractères de la vraie civilisation et du progrès A. K.

Քննելու նազատութեան սկզբունքը մօլթերի, Ռուսոյի, Տեղարթի և Տիտրոյի գրիչներովը փիլիսոփայական դարձաբաններու աշխարհին մէջ հրատարակուելէն 'ի վեր մարդկային միտքը նոր թռիչք մը ստացաւ: Իւրովի հարցուց անխիայ: Ասկէ՞ եկայ ինչ և ո՞վ եմ, ո՞ւր կերթամ և ինչպէս պիտի երթամ: Այս հարցումներուն պատասխանը կնճռալի էր: Այս խնդիրները լուծելու համար բանաւորութեան արհեստը իրենց զբաղում ընող անձինք ըստ իրաւունք էին իրենց էութեան, կենդանութեան,

զղայութեանց և ծանօթութեանց պատճառը քննել և իմանալ:

Այս նպատակին հասնելու համար ուրիշ կերպ միջոց չկար, բայց միայն նետուել փիլիսոփայութեան գիւղը, ընդլայնել մաքին հորիզոնը, բարձրանալ գէտ 'ի իմացականութեան վերին դաւանները և հոն թռչալու աշխատիլ պատուելու անստուգութեան այն վարպետը, որու ետևն է քանի մը ահագին խնդիրներու լուծումը, խնդիրներ որոնց մէկ մասը արդէն լուծուեցաւ և որոնց մէկ մասին լուծումն ալ գերեզմանի կափառիչին ներքև սպասելով լուսաւրեալ աշխարհը երկբայութեան մէջ կը թողու՝ կարծես թէ մարդու մաքին սահմանաւորութիւնը ծագելու և անոր յանդգնութիւնը պատժելու համար: Այս երկբայութիւնը ոմանց բարոյական էութեան մաշիչ թոյն մը կրնայ համարուիլ, երկբայութիւն զոր Ալֆրէտ Միսէ կանուանէ՝ կերպիւ իւրք իրաւունք ունենալով՝ տասնեաններորդ դարու հիւանդութիւնը՝ ասոր քոյրը անուանելով նաև ձանձրութիւնը:

Այս ահագին խնդիրները, որոնց համար դոհացուցիչ պատասխան մ'առնելու նպատակաւ մարդկութիւնը փիլիսոփայութեան կը դիմէ, հետեւեալներն են:

Այս աշխարհս, զոր անեզրութեան ձեռքը իբր հիւլէ անջրպետութեան մէջ նետած է ինքնազոյ է, թէ ունի ստեղծիչ մը:

Եթէ ինքնազոյ է, ինչպէս կարելի է պատահաբար տեղի ունենալ իրերու այնպիսի համակարգութիւն մը ուր բնագանցութիւնը մեղ կը յայտնէ՝ յաւիանական օրէնքներու էութիւնը և հետեւաբար բարձրագոյն ու ամենակարող իմացականութեան մը միջամտութիւնը: Եթէ ինչպէս չէ աշխարհս, եթէ Արարիչ մ'է պատճառներու պատճառը, Անիկա ինչպէս ստեղծած է զմարդ, ազատ և իր գործոց պատասխանատուն, թէ ճակատագրային զօրութեանց ենթակայ ինքնաշարժ մեքենայ մը:

Մարդս հոգի ունի՞ թէ ոչ: Հոգիին անմահութիւնը ստոյգ է թէ երևակայական ցնորք մը:

Հանգերձեալ աշխարհ մի կայ թէ ոչ, մարդս մահուանէ ետք պատիժ կամ վարձք պիտի ընդունի՞, թէ այս ալ երևակայութեան ցնորք մ'է:

Ահա այն ահագին խնդիրները զորս Արդարու փիլիսոփայութիւնը յանդգնութեամբ յուզեց, և որոնք երկու սկզբունքներու մէջ երկու դարէ 'ի վեր սոստիկ կախի մը պատճառ եղան:

Առաջինն է իշխանութեան սկզբունքը, որ կը

կոթնի յայտնութեան և աւանդութեան վրայ :

Երկրորդն է ազատութեան սկզբունքը որուն գահն է մարդկային բանաստորութիւնը :

Իշխանութեան սկզբունքը կը ներկայացնէ Եկեղեցին :

Ազատութեան սկզբունքը կը ներկայացնէ փիլիսոփայութիւնը :

Եկեղեցին անշարժ է և մնայուն : Անիկա չի քննե՞ր՝ այլ կը հաւատայ . իւր փաստն է յայտնութիւնը (révélation) յանուն որոյ կը հարկադրէ զմարդ հաւատալու իւր վարդապետութեանց :

Փիլիսոփայութիւնը ընդհակառակն՝ ըստ Տէրարթի՝ նախ իւր միտքը դրաւող ամէն կրօնական կարծիքները արմատաքի կը խլէ ու նորէն զանոնք մի առ մի քննելով ճշմարիտը կընդունի և անստոյգը կը մերժէ : Իւր իրը ճշմարիտ ընդունածը ուրիշին ալ կուսուցանէ՝ համոզելով զանիկա որ հաւատայ իւր ընդունած ճշմարտութեան : Այս համոզումը բոլորովին տրամաբանական է , և հաւատքն ալ կամայական և ազատ :

Իշխանութեան սկզբունքին ասպարէզը իւր դրօշակիրները ունի , որոնք են գրական կրօնքները , ինչպէս Քրիստոնէութիւնը՝ իւր ամէն Ճիւղերովը , Մահաձեռնութիւնը , Մովսիսականութիւնը և :

Նոյնպէս ազատութեան սկզբունքին ասպարէզին մէջ կը նշմարուին այլեւայլ դրօշակիրներ , որոնց կրօնքը ձև չունի և որոնք կ'անուանին Հոգևորականութիւն (spiritualisme) , Անաստուածութիւն (Athéisme) , Նիւթալիզմ (Matérialisme) , Աստուածականութիւն (Théisme) , Բազմաստուածութիւն (Polithéisme) , Ամենաստուածութիւն (Panthéisme) , Ողկոտութիւն¹ (Spiritisme) և

Գրական կրօնքներու իրարու հետ կտուիլը ակուր հետեւութիւն ունեցած է : Բացարեւնք մեր միտքը Իշխանութիւնը բանաստորութեան զօրութիւնը առ ոչինչ գրելով , երբ կուզէ նաև բունանալով հաւատքի բերել անհաւատը կամ տարակարծիքը , զօրութեան կը զիմէ , ուսկէ յառաջ կու գայ քաղաքական անթոյլտուութիւնը : Միջին դարու պատմութեան արիւնշառելի էջերը ընդարձակօրէն մեզ կը յայտնեն թէ Աստուածպետութիւնը զերբնականին և աւանդութեան վրայ յենլով և իր կամքը յառաջ տանելու համար զօրութեան գիմնելով ինչ

սոսկալի հալածումներու , օձտումներու և արիւնահեղութեանց պատճառ եղաւ : Բայց ասով լսել չենք ուզեր թէ քրիստոնէութիւնը միակ չարեաց պատճառ եղած է , քաւ լիցի : Բնդհակառակն գրական կրօնքներուն վեհադոյնը ու վսեմագոյնն է այն : Քրիստոնէութիւնը երկու պատմական կողմ ունի :

Առաջին . անոր ծագումը փրկութեան լոյս մը էր : Բարբարոսութիւնը վերցուց աշխարհիս վրայէն , բարբերը փոխեց և մեղմեց , լուսաւորութեան մարդիչը եղաւ՝ մարդկային ընդհանուր համերաշխութեան հիմ դնելով սէրը : Աւետարանի բարոյականը աննման է . ինչ որ է անոր հիմը , նոյնն է նաև փիլիսոփայութեան հիմը , այսինքն մարդուս կրկին երջանկութիւնը սիրով : Բայց մարդիկ Քրիստոնէութեան հիմը սեպուող բարոյականը աւելի իրենց լեզուին քան թէ սրտին մէջ ունենալու սկսելով չարաչար եղծեցին անոր անմահ սկզբունքները : Այս եղծումը կը շօշափուի պատմութեան մէջ , ինչպէս քիչ մ'առաջ ըսինք , և Ճիւղ նոյն եղծումը հրաւիրեց փիլիսոփայութիւնը որ գայ և զինքը պատժէ : Ահա այս է քրիստոնէութեան երկրորդ պատմական կողմը : Փիլիսոփայութեան միջամտութեամբը Քրիստոնէութեան հիմը աւելի կը կազգուրի քան թէ կը խախտի :

Դատնանք մեր նպատակին :

Իսինք թէ գրական կրօնքներու կոխը տխուր հետեւանք ունեցած է : Սակայն ուրիշ օրերու մէջ տեսնուած է այս և անդաւանալի կերպով մեր ժամանակէն հեռացած : Մեր օրերու մէջ անոր դարձը անհնարին է : Ստուգիւ կրօնական կոիւները անպակաս են հիմա ալ , բայց զէթ արիւնահեղութեանց տեղի չեն տար . տարբեր հակառակորդներու մէջ տեղի ունին անոնք և տարբեր նկարագիր կը կրեն :

Երբեմն յայտնութիւնը բանաստորութեան այսինքն իշխանութիւնը ազատութեան հետ , երբեմն ալ նոյն իսկ ազատութիւնը ազատութեան հետ կը մարտնչի :

Առջինը երբ տեղի կուենայ , հաւատքը քանի որ բանաստորութեան տիրուհի կը դաւանի ինքըզինքը և յանուն յայտնութեան ու աւանդութեան կը խօսի , բանաստորութիւնը կը պարտաւորի կամ հաւատալ և կամ լռել :

Այլ սակայն ազատութեան սիրահար ու պաշտպան մը երբ այս տեսակ վիճարանութեան մը մէջ իրեն կայան կընտրէ ոչ թէ ազատութեան այլ իշխանութեան սկզբունքը , ան աստի՛ն անիկա կը պարտաւորի կամ իշխանաբար խօսիլ՝ առանց մտքի և խղճի ազատութիւնը յարդելու և հետեւաբար իւր

¹ Այս կրօնական դրութեան վրայ մօտերս պիտի խօսինք մասնաւորապէս :

ազատութիւնը ուրանալով, և կամ թէ իւր սկզբանցը տէր մնալու համար ծանրութեամբ և անկեղծութեամբ ազատութեան ասպարէզը իջնել և ճշմարտութիւնը փնտռելու անկեղծ նպատակաւ վիճել և դատումով ընդունիլ իւր ստոյգ ինչ որ ստոյգ և անհակառակելի կերևայ մաքին :

Գուցէ ընթերցողք արդէն հասկցան թէ այս խորհրդածութիւնս ուղղակի կը վերաբերի այն կրօնական վիճարանութեան որ մտաբեր տեղի ունեցաւ երկու Հոյ թերթերու մէջ, և որու մասին նշմարուած խաղութիւնը ոչ միայն մեր, այլ նաև շատ քրիստոսրդաց սրտին ցաւ պատճառելով անախորժ սպաւորութիւն մ'ըրաւ այն : Այն վիճարաններուն մին իշխանութեան սկզբունքը իրեն կայան ընարած է, միւսն ալ ազատութեան սկզբունքը : Առաջինը գրական կրօնքը կը պաշտպանէ այն ղէնքերով, զորս արդէն յայտնեցինք . երկրորդը բնական կրօնքը, որ է հոգևորականութիւնը, փիլիսոփայութեան այն ճիւղը, որն որ հաստատելէն ետք կը հաւատայ Արարչի մ'էութեան, Աստիճանութեան, հոգիին անսահմանութեան, ապաղայ վարձատրութեան ու պատժապարտութեան և . . .

Ժամանակէ Երեւոյն խմբագիրը և իւր հաւաքակորդը թող չկարծեն թէ իբր դատաւոր իրենց կռիւին մէջ նետուիլ ու զայն վերջացնել կուզենք, կռիւ մը, սրուն առանց կրից ու անկեղծաբար շարունակուիլը աւելի օգուտ քան թէ վնաս կը պատճառէ հանրութեան : Բայց այսպիսի փափուկ խընդիրի մը մէջ, որ ուղղակի ընդհանուր մարդկութեան սիրելագոյն շահերուն հետ անխզելի կապ մ'ունի, եթէ ամէն մէկ անհատ կը պարտաւորի խօսիլ ու լուսաւորել հասարակութեան դաղափարը, մենք ալ նոյնպէս պարտաւոր ենք խօսելու, գրելու և ըստ մեր կարողութեան դատելով մեր կարծիքը յայտնելու, վճիռը ճշմարիտ իմաստասիրութեան թողլով :

Գիտաւորութիւն չունինք շոշափել խնդրոյն այն կողմը որ բողբոջին անձնական է, կիրք է, չարիտի ուղեք նաև երեան հանելու այն հակասութիւնները ու անպատեհ առարկութիւնները որք բուն խնդրէն գուրս են : Երբ միակ նպատակն է խնդրոյն հիմնական կէտերուն վրայ խօսիլ, և իբր հետևորդ հոգևորական փիլիսոփայութեան ժամանակէն հերքումը քննել ու իր կարծիքներուն արդի փիլիսոփայութեան առջև ինչ արժէք ունենալը յայտնել : Այս պարբերական թերթը իւր հակառակորդին քարոզած խիստ բնական և պարզ սկզբունքներէն իրարանցումը մէջ կիցնայ և անոնց տարածու-

մէն ազդին ապաղայ թշուառութեան սև դուշակ կանոյնելով վնասաւթութեամբ անկրօն կը հռչակէ իւր հաւաքակորդը և կըսէ " Կարգ մը անհատաւ ըլլայ, անկրօն, անաստուած, ինչ կուզէ թող ըլլայ, իր գիտնալու բանն է, երբ պարզ անչէ մը ֆայնալգորիթմ չարք, երբ որքէն մը վարչապետի լաւքէր, յարգանաց խնարձանուար է : (1)

Ժամանակէ այն սկզբունքներու տարածումն Սահմանագրասիրաց գոթաղգութիւնը ու ազդային թշուառութիւնը նախատեսելով երբ ետանդադին կը բողբէ, անդուշարար երկնային խնդիրը երկրայինի կը փոխէ և ընդհանուրին շահը մասնաւորին կը զոհէ : Թէ և մենք ալ իրեն չափ մեր ազդը սիրող ու անոր բարեխառութեանը փափաքուենք, բայց ոչ երկնային խնդիրը երկրայինի փոխելու, ոչ ընդհանուր մարդկութեան շահը սակաւթիւ մարդկային ընկերութեան մը շահուն զոհելու ազդամուլութիւնը, և ոչ ալ փիլիսոփայական խնդիրի մը յուզուելովը մեր ազդին ապաղայ ապերջանկութիւնը դուշակելու կարողութիւնը ունինք :

Շարունակել

ԼԵ ՄԻՋԵՐԱՊԸ

Երբ ազդին ընթերցասիրութեան վիճակը այն աստիճան ավստոսալի է որ տակաւին շատ ժամանակ չպիտի ունենանք ոչ հմուտ հեղինակներ, ոչ ալ երևելի թարգմանիչներ : Երբ մէջ կարծես անհնարին եղած է դրքի մը, թարգմանութեան մը երկրորդ կամ երրորդ տիպը տեսնել, ՚ի բաց առեալ քանի մը դատաղիրքեր : Բարիզի մէջ կազմուած յանձնաժողով մը, որուն պաշտօնն է քննել և պարզել զբնական սեփականութեան խնդիրը, մեծահասարակ զիրք մը հրատարակած է, ուր քանի մը երևելի Գաղղիացի հեղինակներու աշխատութեանց արագորութեան վրայ հետադայ վիճակադրութիւնը կը կարգանք, որն որ կընայ գաղափար մը տալ ուրիշ ազդերու ընթերցասիրութեան վրայ :

Վճիթերի գիրքերը 1714 էն մինչև 1849, 128 տիպ, Բուսոյի զանազան գրութիւնները 133 տիպ, Բաւիւնի աշխատութիւնները 70 տիպ, Գորնէյլի թա-

1. Ժամանակ. թիւ 16. էր. 125:

արեւոյ թիւնները 10 տիպ, Մօլիերի ամբողջ դոր-
 ծերը 450 տիպ, Ֆեյնելի Տեղեկալի թիւնները մին-
 չև 1830, 93 տիպ, և 1 ը Սածի Ժիւ Պլատ 100 տիպ
 ունեցած են: Չմտնանք ըսելու թէ նաև Եւրո-
 պայի ուրիշ քաղաքներու մէջ շատ տիպեր ունեցած
 է այս Տեղեկալի թեանց մեծագոյն մասը և կար-
 ծեմք թէ կրնանք ըսել թէ այս գիրքերէն հազիւ
 հալ մեր մէջ քանի մը թարգմանութիւններ կան:

Այլ սակայն առնք այնպիսի մատենագրու-
 թիւններ են, որք ազգերու լոյսը զօրութի կը բաշ-
 խեն: Գիրք մը թարգմանելու կամ Տեղեկալի թեան և
 ապելու համար ընթերցող ունենալու է, և մեր մէջ
 գիտնալ թէ նաև խիստ դիւրադին թարգմանութե-
 նէ կամ Տեղեկալի թեանէ մը քանի օրինակ կըր-
 նայ ծախսիլ:

Տեղեկալի մը գրելու կամ լեզուադէտ մը թարգ-
 մանելու համար 'ի սկզբան իւր մտքին առջև կը-
 բերէ իւր ունենալիք գնորդներուն թուոյն ուրուա-
 կանը և կտախտուի գրիչը վար գնել յուսահատա-
 բար:

Գիտաւորութիւն չունինք քննել և իմանալ թէ
 ինչ է մեր ընթերցասիրութեան այս գծրադէ կա-
 ցութեան սկզբնապատճառը: Մի միայն կուզենք հաս-
 տատել եղելութիւն մը և անկէ սա հեռուութիւնը
 հանել թէ Հայք առ այժմ գատապարտուած են
 զօրի մնալու այն ամէն գիրքերու թարգմանութե-
 նէն, որոնց 'ի լոյս ընծայուիլը Մեկնանսնի բա-
 րութեան կարօտ է: Այս գրեանց կարգը կը գտանք
 ահա նաև Մեքսիկոյ ըստած վեղստանութիւնը,
 որուն անունը արդէն լսեցինք և որուն ինչ ըլլա-
 լը խիստ քիչերը հասկցան կամ հասկնալու են:


Հիւսիսային այս աշխատասիրութիւնը այնպիսի
 գործ մի է զոր ճարգկային միտքը հազիւ թէ մէկ
 կամ երկու դարու մէջ անգամ մի միայն արտագրե-
 լու առիթ կրնայ ունենալ: Բայ 'ի քանի մ'ազգերէ,
 ամէն ազգի լեզուով թարգմանուած է այն արդէն,
 իսկ մեր մէջ անոր թարգմանութեան և հրատարակ-
 ուելուն սպասելու առ այժմ ուղիղ խելքի գործ չէ:
 Ըսել նաև թէ կրնանք այս գրքին ինչ ըլլալը և
 'նչ նպատակ ունենալը հասկնալ, յանգուզն են
 թարգմութիւն մ'ընել է:

Առաջին և երկրորդ հատորներուն վրայ յա-
 մանովու համառօտ և անկատար տեսութիւն մ'ը-
 բած ենք Ծառի մէջ, ոչ թէ Մեքսիկոյ ինչ ըլլա-
 լը յայտնելու, այլ անոր մէկ ճաշակը տալու համար:
 Մեզմէ ետք նոյն աշխատութեան վրայ խօսեցաւ
 Մատի մէջ նաև Պ. Պատնասեան, բայց իւր յօ-
 դուածէն ընթերցողը կամ բան մը չհասկցաւ և


կամ թէ խիստ աննպաստ գաղափար մ'ունեցաւ
 Մեքսիկոյ ինչ ըլլան: Հիւսիսային գիրքը իբր լի
 վեղստանութիւն կարգալու և հոն դէպքերու, հան-
 դոյցներու շարք մը գիտելու չէ: Արդի մարգկային
 ընկերութեանց աւետարանն է այն: Այնպիսի երեւելի
 խնդիրներ կան անոր մէջ, որք բոլոր Ֆրանսաի և
 հեռակարգ Եւրոպայի ուշագրութիւնը դրուած են
 ներկայ դարու մէջ, և որոնց անլոյժ մնալը ազ-
 գերու և պետութիւններու մտատանջութիւն և եր-
 կիւղ կը պատճառէ անընդհատ:

Արդ քանի որ յոյս չունինք այս բազմահատոր
 երկասիրութեան թարգմանութիւնը տեսնել մեր
 ազգին մէջ, — և իցիւ թէ մեզ անձանօթ Մեկե-
 նաս մը 'ի գերե հանէր մեր այս կարծիքը, — մեր
 վրայ պարտք գրինք ամէն մէկ հատորին վրայօք մէկ
 կամ երկու յօդուած հրատարակել հանդիսիս մի-
 ջոցաւ, իւրաքանչիւր հատորին ամբողջ պարունա-
 կութեան, Տեղեկալի շոշափած խնդիրներուն, ա-
 սոնց ներկայ ժամանակիս վրայ բանեցուցած ազգե-
 ցութեան և մեր ազգին նկատմամբ ունեցած կարե-
 ւորութեան վրայ խօսելով, երբեմն ալ ընտիր կը-
 տորները անփոփոխ թարգմանելով: Գիտենք թէ
 գժուարին գործ մ'է այս, այլ ազգային լուսաւո-
 րութեան ջահ ըլլալու պահանջողութիւնը ընդունե-
 լուն քով կայծ մ'ըլլալու է քառասուն-իննէն ալ
 անզուսպ է:

Ծառի յաջորդ թուով կսկսի մեր խոստման
 գործարարութիւնը:



ՊԱՌՔ ԱՅ



ԻՆՉ ԵՒ ՄԵՐԸ

— Չեմ գիտեր ինչ է սէրը, որն որ գիտեմ
 թէ սակէ կուզայ և որուն ինչպէս վերջանալը չեմ
 գիտեր: Մարգկային կրից մէջ միայն սէրն է որ
 ամենէն աւելի կը շփոթէ միտքը ու ամենէն աւելի
 անկարգութիւններ ընել կուտայ հոգիին և որն որ
 ամենամեծ յանցանքներու մէջ կը նստէ գայն: Այն-
 նեին տարբերութիւն մը չկայ սիրահարի մը և յի-
 մարի մը մէջ: Մէկին գործողութիւնները միւսին
 գործողութեանցը կը նմանին, և եթէ յիմարութիւ-
 նը կը շփոթէ միտքը, սէրն ալ դատողութիւնը կը-

շփոթէ, և բանաւորութիւնը կը խանդարէ : Եթէ դիտելու ըլլանք որոնք որ կը սիրեն, պիտի տեսնենք ստուգիւ թէ այն կը սիրէ ինչ որ սիրելի չէ : այս կատէ ինչ որ սիրելու արժանի է : մէկուն գեղեցիկ կերևայ ինչ որ տղեղ է : միւսին ալ տղեղ՝ ինչ որ գեղանի է : ումանք կը յարցեն ինչ որ կը պարտաւորէին արհամարհել, ումանք ալ կարհամարհեն ինչ որ իրենց յարցանաց արժանի է : Այլ կը իրմէ խոյս առնողին ետեւէն կերթայ, ուրիշն ալ խոյս կուտայ իրմէ բաժնուիլ չուզողէն : Արդեօր կընային լուազոյն ընտրութիւններ ընել քանթէ այս անմիտները : Արդ եթէ բանաւորութիւնը մեր հարըստութեանց ամէնէն մեծն է, ուրեմն յայտնի է թէ անկէ զմեզ զրկողը չարեաց մեծագոյնն է : Ճանչնալու համար թէ որչափ կոյր է այս կիրքը, բաւական է տեսնել այն իրերը որոնցմով կը յազի այն, զորըս իւր թանկագին դանձերը կը համարի և որոնցմով բոլոր իւր փառասիրութիւնը կը զեղու : Արդ ամէն փափագներուն լրումը, իւր ամէն ակնկալութեանց առարկան, իւր ամէն վիշտերուն փոխարէնը և իւր ամէն ծառայութեանց հատուցումը կը նայիս որ նայուածք մը, ժպիտ մը, խօսք մը, սիրաբոյր ժանտ տունակ մը, կամ ժպտաւէնի ոչինչ կտոր մ'է :

Այլ սակայն այսպիսի մեծագին դանձեր ստանալու համար պէտք է հառաչել, հեծել, պէտք է երկար ասեն վշտահարիլ՝ և նաև առանց զանդառելու անմոռնչ վշտահարիլ, պէտք է անընդհատ խնամքներ և մշտնջենաւոր անհանդստութիւն ունենալ, կերակուր չուտել և անհանդիստ ըլլալ, չըխօսիլ, ամենեւին չքնանալ, ամենեւին չխնդալ : դեղնիլ և այլակերպիլ, նիհարիլ, մտախոհել, և մեղամաղձոտ ըլլալ :

Պէտք է անհոգ ըլլալ իւր բարեկամաց, իւր շահերուն և պատուոյն նկատմամբ՝ այսպիսի հաճելի բանի մը բոլորովին անձնատուր ըլլալու համար : Պէտք է այնպէս շարժիլ որպէս թէ երկրիս վրայ միայն մէկ կին ըլլար, միայն անոր նայիլ, միայն զանիկայ յարդել, չթողուլ զանիկայ՝ ինչպէս ստուեր մը չթողուր մարմին մը, անոր գլխուցաւ ըլլալ՝ սիրականը ըլլալէն ետքը, և ասելի ըլլալ՝ ինքզինքը անոր սիրելի ընել ուզելով : Բայց այս ամէնը ասկաւին բան մը չէ եթէ համեմատուի նախանձոտութեան հետ, որն որ անբաժանելի կերպով սիրոյ քովէն կը քալէ միշտ : Գժոխքը չունի անանկ անքերելի տանջանք մը որ կարենայ համեմատուիլ այս հեշտախտութեան հետ, որն որ հոգին ալ յայլմէ կընէ, միտքը կը շփոթէ, զգայութեանց զործածում մը կը խոլէ, ուրուականներ տեսնել կը կարծէ,

պատրանքը իբր ճշմարտութիւններ ընդունել կուտայ, ինչպէս նաև ցնորքն ալ իբր իրական մարմիններ : Կախանձոտութիւնը կը սնի թոյնով և ասով կը սնէ հոգին զոր նուաճած է : այնպիսի օձ մ'է որ մեռցնէ զինքը ծնանողը : Իւր հեշտագոյն մտախոհութեանց առարկաներն են զահալիժութիւններ կամ առտտաններ, թոյններ կամ դաշոյններ, նախանձայոյզ հակառակորդի մը կամ իւր մահը : Այս շղթայագերծ կատարութենէ յառաջ եկած են հազար ու մէկ սպանութիւններ, արեւնահեղութիւններ և ուրիշ բիրաղոյի սարսափելի ոճրագործութիւններ : Այսպէս այն ամէն բանաստեղծները որք նրկարագրեցին այս կիրքը որով կը սիրենք, մանկային հասակ և կերպարանք տուն անոր՝ իւր անկարգ ընթացքը արտայայտելու համար : կապով մը աչքը գոցուած նկարագրեցին զայն՝ ցուցնելու համար մեզի այս յիմարութեամբ յափշտակուողներուն մալրումը : զէնքեր տուն անոր՝ իրմէ հեռուող չարեաց պատկերը մեզ ներկայելու համար : և ընդզայից պէս անոր ձեռքն ալ ջահ մը տունին՝ մեզ իմացնելու համար այն աղետաբեր հրդեհը որով հոգին կը նուաղի ու կ'սպառի և որն որ ժամանակ առ ժամանակ տուններ, քաղաքներ, նահանգներ և ամբողջ միապետութիւններ կործանած է :

Օրերդ Աշուրեր

Ծ Ա Մ Ն Մ Ա Մ Ա

Հրատարակի ամեն ամսոյ 1. 10. եւ 20ին : վեցամսեայ գինն է 2 1/2 մեծրա : Իցմիբն գուրս՝ 3 մեծրա : Անցնար նամակ կամ ծրար մերժելի :

Աշոյ Բորժակալաց անուանի :

- Իշէր. Կիրիթ Խան, Թիւ 3, Կանգիսիս գրաւենեակ :
- Պօլէ. Գ. Կ. ՓԱՆՈՍԵԱՆ. վարպօճ Խան, Թիւ 1 :
- Նիւրի. Գ. Կ. ԽՈՍՐՈՎ. ՓԱԳԻՈՐ ԷՍԿԵՆԵԱՆ :
- Տրադուր. Գ. Կ. ԽԱՉԱՏՈՐ ԵԼՄԱՍԵԱՆ :
- Աւետարեւ. Գ. ԿԱՐԱՊԵՏ ՅԱՊԵՏԵԱՆ :
- Փօլէ. Գ. ԳՕՂՈՍ ԿՈՍՏԱՆԳԵԱՆ :
- Հաւեդ. Գ. Յ. Ս. ԳԻՒԲԻՃԻԱՆՕՖ :

ՀԱՐԱԳԻՐ ՏՆՕՐԵՆ
ԳՐ. ՉԻԼԻՆԿԻՐԵՆ

ՅԵՄԻՆԵՆԱ
ՅՊԵՏՐՈՐԹՈՒՆ ՏԵՏԵՆԵՆ